Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ ԹԲԻԼԻՍԻԻ ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

(10 հունիսի, 2011 թ.)

Սիրելյալ եղբայր ի Քրիստոս,

Գոհություն ենք հայտնում Բարձրյալին մեր այս հանդիպման համար, որը տեղի է ունենում Հոգեգալստյան շնորհաբաշխ տոնի հոգևորոգ օրերին:

Վրաստան ենք ուղևորվել Ձեր հրավերով և Վիրահայոց թեմ՝ Հովվապետական այց կատարելու համար: Ձերդ եղբայրության հետ աղոթական օրեր պիտի ապրենք՝ հանդիպելով մեր եկեղեցիների հավատավոր զավակներին, այցելելով հայոց և վրաց եկեղեցիներ ու վանքեր: Պիտի քննարկենք երկուստեք մեր եկեղեցիներին հուզող հարցեր և խոսենք մեր համագործակցությունը զորացնելու հնարավորությունների մասին: Եկել ենք քաջալեր հոգով և հավատով, որ մեր հանդիպումը պիտի ամրապնդի դարերով վկայված եղբայրությունը և բարեկամությունը մեր ժողովուրդների և նոր առիթ դառնա պատասխաններ գտնելու մեր առջև այսօր հառնող հարցերին, հաղթահարելու մեր մտահոգություններն ու դժվարությունները՝ ի սեր այն մեկ և նույն հույսի, որին Աստված կոչեց մեզ:

Տասը տարներ են անցել Թբիլիսիում մեր հանդիպումից, երբ Մեր գահակալության առաջին տարում այցելեցինք Ձեզ, իսկ փոխադարձ այցով 2003 թ. Ձերդ Սրբությունը այցելեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին: Մենք միասին աղոթեցինք միածնակառույց Սուրբ Էջմիածնում, Երևանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում, որ խորհրդանիշն է Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակի: Այսօր աղոթում ենք Սուրբ Երրորդություն եկեղեցում, որը խորհրդանշում է Վրաց Եկեղեցու վերազարթոնքը: Փառք Տիրոջը, այս տարիներին բարի արգասիքներով զորացել են մեր եկեղեցիները, Հայաստանն ու Վրաստանն ապրում են հոգևորոգ օրեր այնպես, ինչպես 17 դար առաջ, երբ քրիստոնեությունն ընդունեցին պետականորեն:

Աստծո օրհնությամբ մեր առաքելությունը արգասավորելու բարի առավոտ է բացվել: Մեր ժողովուրդները ուրախություն են ապրում իրենց հայրենի ազատ պետականության վերահաստատման և իրենց հոգևոր-եկեղեցական կյանքի վերանորոգության: Այսօր, երբ կրոնական արժեքների անտեսման, բարոյական հարաբերապաշտության և բազմաթիվ այլ կեղծ ազատատենչ գաղափարախոսությունների հետևանքով մարդկությունը կանգնած է աշխարհիկացված՝ կրոնաթափ հասարակության վտանգի առջև, միտիթարություն է Մեզ համար, որ արդյունավոր է մեր եկեղեցիների առաքելությունը, և մեր քաճարները բազմամարդ են Աստծո խոսքը լսելու կարոտ հավատացյալներով: Մեր ժողովուրդներին, որ քրիստոնեական հավատքը կրում են որպես մաշկի գույն, ոչ մի մոլորեցնող ուսմունք ու վարդապետություն, կարիքի ու նեղության մեջ սուտ, խաբեպատիր ոչ մի խոստում չեն կարող հեռացնել ազգային-հոգևոր մեր Սուրբ Ավանդությունից, առաքելաշավիղ ճանապարհից մեր եկեղեցիների:

Աղոթական այս պահին Սուրբ Երրորդություն եկեղեցում Մեր ցավակցությունն ենք հայտնում Ձերդ Սրբությանը եւ վրաց ժողովրդին մայիսի 25-ին Թբիլիսիում տեղի ունեցած բախումների ժամանակ զոհվածների կապակցությամբ: Այս Սուրբ Տաճարում հայցում ենք, որ Տերը երկնային երանության մեջ խաղաղությամբ ընդունի զոհվածների հոգիները եւ Սուրբ Հոգու շնորհով մխիթարություն պարգեւի նրանց հարազատներին: Աղոթում ենք, որ այսուհետ չխռովվի եւ չվտանգվի վրաց ժողովրդի կյանքը, այլ Աստծո օրհնության ներքո շենանա ու պայծառանա՝ լի ձեռքբերումներով ու խնդությամբ:

Առ Աստված աղոթքով՝ մաղթում ենք Ձերդ Սրբությանը քաջառողջություն եւ արեւշատություն, որպեսզի տիրախնամ Ձեր հոտը առաջնորդեք դեպի հավատքով ոռոգյալ, բարեբեր ու օրհնյալ հանգրվաններ՝ ի պայծառություն Վրաց Ուղղափառ Եկեղեցու եւ Վրաստանի Հանրապետության:

Թող Տերը խաղաղ պահպանի մեր երկրները եւ զորացնի մեզ մեր առաքելության մեջ եւ օրհնի մեր ջանքերը՝ ի սեր մեր եկեղեցիների եւ ժողովուրդների եղբայրության զորացման ու ամրապնդման: